ԴԱՍ 4

ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԵՎ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐ ԵՎ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐ

Այս դասը կազմված է 4 հատվածներից *(մոտիվացնող ներածական տեսանյութ, դասի տեսական նյութ, բառարան և ինքնաստուգիչ հարցեր), որի ընդհանուր տևողությունն է 240 րոպե։*

Սույն հեռաուսուցման դասի այս հատվածը յուրացնելու համար հարկավոր է 145 րոպե։

Ինքնաստուգիչ հարցերը և բացատրություններով ուղեկցվող դրանց պատասխանները ներառված չեն այս փաստաթղթում։ Դրանք առանձին փաստաթղթերով ներկայացված են հեռաուսուցման փաթեթում։

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ

Տեսանյութն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 5 րոպե:

(հասանելի է Արդարադատության ակադեմիայի կայքի հեռաուսուցման բաժնում)

Կարդացեք սույն դասի տեքստը և այն յուրացնելուց հետո միայն անցեք դասի հաջորդ մասերին (բառարան, ինքնաստուգիչ հարցեր):

Նախորդ դասի ընթացքում խոսել ենք ՄԻԵԴ վճիռների կատարման նկատմամբ ստանդարտ և ուժեղացված վերահսկողական ընթացակարգերի ու դրանց առանձնահատկությունների մասին: Նաև Ձեզ ներկայացրել ենք, թե որն է վերահսկողության ներքո գտնվող գործերի դասակարգման տրամաբանությունը, ինչ դեր այն կարող է ունենալ ՄԻԵԴ վճիռների կատարման ու դրա արդյունավետ վերահսկողության գործում: Դրա հետ մեկտեղ, քննարկել ենք, թե ինչ են գործողությունների ծրագրերն ու հաշվետվությունները և որն է վճիռների կատարման գործընթացում դրանց նշանակությունը:

Չորրորդ դասի շրջանակում, նախ և առաջ, խոսելու ենք վճիռների կատարման գործում ՄԻԵԴ-ի դերի, ազդեցության և ներգրավման գործիքակազմի մասին: Բացի դրանից, ներկայացնելու ենք ՄԻԵԴ վճիռների կատարման գործում Մարդու իրավունքների նիստերի (հանդիպումների) նշանակությունը և Նախարարների կոմիտեի՝ այդ նիստերի միջոցով վերահսկողական հնարավորությունները: Առանձին անդրադառնալու ենք Նախարարների կոմիտեի ռեզոլյուցիաներին և որոշումներին, ցույց ենք տալու ՄԻԵԴ վճիռների կատարման գործում միջազգային այդ հաստատության ընդունած փաստաթղթերի կարևորությունը:

4.1 ՄԻԵԴ ԴԵՐԸ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Նախորդ դասերից մեկում արձանագրել ենք, որ վճիռների կատարման գործընթացում կարևոր դերակատարում ունեն նաև Կոնվենցիոն այլ մարմիններ՝ ինչպես, օրինակ, ***Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը:*** Բայց առաջնահերթ պետք է առանձնացնել հենց **Մարդու իրավունքների եվրոպական դատարանինի** դերակատարումը:

Վերջին ժամանակներում ՄԻԵԴ-ը զգալիորեն ընդլայնել է վճիռների կատարման գործում իր անմիջական մասնակցությունը՝ նաև ակտիվացնելով Նախարարների կոմիտեի հետ փոխգործակցությունը:

Դաս 2-ի ընթացքում Ձեզ առաջարկվել էր կարդալ ՄԻԵԿ 46-րդ հոդվածը և գտնել այն ուղղությունները, որոնցով ՄԻԵԴ-ը ներգրավվում է վճիռների կատարման գործընթացին:

Համադրեք Ձեր պատասխանը սույն ենթաթեմայում ներկայացված նյութի հետ:

Նախ, դրա համար կա հստակ Կոնվենցիոն (իրավական) հիմք, որը, ինչպես արդեն ասվել է Դաս 2-ում, Կոնվենցիայի 46 րդ հոդվածն է (Վճիռների պարտադիր ուժն ու կատարումը) և այն բազմաշերտ է ու վճռի մեկնաբանողական իրավասությունից բացի ՄԻԵԴ-ին վերապահում է ոլորտում ներգրավման լայն շրջանակ: Բացի դրանից, ՄԻԵԴ ներգրավվածության մասով շահագրգռված է նաև Նախարարների կոմիտեն, քանի որ այդպես ապահովվում է վճիռների և՛ արդյունավետ, և՛ արագ կատարումը: Ավելին՝ Նախարարների կոմիտեն նույնիսկ առաջարկել է ՄԻԵԴ ին՝ իր ընդունած վճիռներում, որքան հնարավոր է, ընդգծել, թե որն է խախտման հիմքում ընկած համակարգային խնդիրը (underlying systemic problem), որն է այդ խնդրի աղբյուրը (sources of this problem) կամ դրա խորքային պատճառը:

ՄԻԵԴ-ը վճիռների կատարման գործընթացին կարող է մասնակցել մի քանի ձևով:

Մի ձևը գանգատ ներկայացրած անձի համար արդարացի փոխհատուցման (just satisfaction) չափ սահմանելն է: ՄԻԵԴ-ը պարզապես որոշում է կոնկրետ գումար, որը Նախարարների կոմիտեի վերահսկողության ներքո պետությունը վճարում է սահմանված ժամկետում և կարգով:

Ի ԴԵՊ.

Վճարման ենթակա կոնկրետ գումարի չափը ՄԻԵԴ-ը սահմանում է դիմումատուի ներկայացրած արդարացի փոխհատուցման պահանջի չափի հաշվառմամբ և ըստ տարիների ընթացքում որդեգրած մեթոդաբանության: Բայց նաև լինում են դեպքեր, երբ հատուցում չի պահանջվում դիմումատուի կողմից, ուստի՝ չի էլ սահմանվում որևէ հատուցում, օրինակ՝ Հայաստանի հելսինկյան կոմիտեն ընդդեմ Հայաստանի (Helsinki committee of Armenia v. Armenia) գործը:

Լինում են նաև դեպքեր, երբ ՄԻԵԴ-ն արձանագրում է խախտում, բայց հատուցման հարցին անդրադառնում է առանձին վճռով («Հոդված 41-ի վճիռ»), ինչպես նաև դեպքեր, որբ ՄԻԵԴ-ն արձանագրում է խախտում, բայց չի կարողանում որոշել հատուցման չափը՝ դա թողնելով անդամ պետության որոշմանը:

Մյուս ձևն արձանագրված խախտման խորքային պատճառները վեր հանելն է: ՄԻԵԴ-ը, վճիռների կատարման գործին աջակցելու նպատակով, կարող է մատնանշել առավել ընդհանուր այն խնդիրները, որոնք վեր են հանվել իրավունքի խախտումն արձանագրելիս՝ միաժամանակ ցույց տալով դրանց խորքային պատճառները,

ՕՐԻՆԱԿ.

Բայաթյանն ընդդեմ Հայաստանի (Bayatayan v. Armenia) վճռով ՄԻԵԴ-ը խորքային խնդիր էր դիտարկել ***համոզմունքներից ելնելով հրաժարվողների*** *(conscientious objector) իրավունքների պաշտպանությունն ու խթանումը՝ հարցը դիտարկելով կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի դիտանկյունից: Դրանով պայմանավորված՝ պետության համար բարդացել էր տվյալ և նույն խնդրին առնչվող մյուս վճիռների կատարումը: Այնուամենայնիվ, Հայաստանի կողմից ապահովված համալիր միջոցների արդյունքում՝ 2014 թվականին Բայաթյան խումբ գործերի կատարման վերահսկողությունը փակվեց:*

Ինչպես վերը նշվել է՝ Նախարարների կոմիտեն առաջարկել է ՄԻԵԴ ին, որ իր ընդունած վճիռներում, որքանով հնարավոր է, դատարանն ընդգծի, թե որն է խախտման հիմքում ընկած համակարգային խնդիրը, որն է դրա աղբյուրը կամ խորքային պատճառը:

Տվյալ առաջարկը Նախարարների կոմիտեն ՄԻԵԴ-ին արել է իր թիվ Res(2004)3 ռեկոմենդացիայով, որի հղումը Դուք կարող եք գտնել այս դասի «ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ» մասում:

Կարդացեք այն և պատասխանեք, թե համակարգային խնդիրները վճիռներում ընդգծելուց բացի ուրիշ ինչ առաջարկներ են ներկայացվել ՄԻԵԴ-ին:

Մեկ այլ ձև է կոնկրետ միջոցի ապահովման մասով ցուցում տալը: ՄԻԵԴ ը կարող է տալ կոնկրետ ցուցում՝ նշելով, թե որն է այն միջոցը, որը պետք է ապահովվի պատասխանող պետության կողմից: Այլ կերպ՝ ՄԻԵԿ 46-րդ հոդվածին համապատասխան՝ ՄԻԵԴ-ն առանձին դեպքերում որոշում է այն միջոցը, և նույնիսկ դրա կատարման ժամկետը, որն ի թիվս այլնի պետք է ապահովվի՝ կատարելու համար կոնկրետ վճիռը: Օրինակ՝ անձին ազատությունից ապօրինի զրկելու գործերով restitutio in integrum ապահովելն անպայմանորեն ենթադրում է անձին ազատ արձակելը:

ՕՐԻՆԱԿ.

Ֆաթուլայևն ընդդեմ Ադրբեջանի (Fatullayev v. Azerbaijan) վճռով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ «Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտմանը վերջ տալու հրատապ կարիքով պայմանավորված»՝ պատասխանող պետությունը, որպես Կոնվենցիայի 46-րդ հոդվածի ներքո ստանձնած պարտավորությունը կատարելու միջոցներից մեկը, «պետք է ապահովի դիմումատուի անհապաղ ազատ արձակումը»: Մեկ ուրիշ գործով էլ՝ Սուկաչովն ընդդեմ Ուկրաինայի (Sukachov v. Ukraine), որը վերաբերում է ազատազրկման վայրերում պայմանների, այդ թվում՝ գերբնակեցման խնդիրներին, ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ «իշխանությունները պետք է ներդնեն արդյունավետ կանխարգելիչ և փոխհատուցման միջոցներ կալանքի ոչ համարժեք պայմանների համար»: Եվ, ըստ ՄԻԵԴ-ի, դա պետք է արվի «վճռի վերջնական դառնալուց հետո ոչ ուշ, քան 18 ամսվա ընթացքում»:

Վերջում հավելենք, որ **ՄԻԵԴ-ը վճիռների կատարման գործընթացին ներգրավվում է նաև Նախարարների կոմիտեի հայցով՝ իր մեկնաբանողական լիազորության կիրառմամբ նպաստելով կոնկրետ**

Վճռի կատարմանը: Այդ մասին խոսվել է Դաս 2-ում, և հիշեցման կարգով նշենք, որ դրա ընթացակարգը նկարագրված է *ՄԻԵԿ 46-րդ հոդվածում:*

Ուշադրություն դարձրեք նաև ՄԻԵԿ 46-րդ հոդվածի 4-րդ մասի վրա, որի համաձայն՝ «Եթե Նախարարների կոմիտեն գտնում է, որ որևէ գործով որպես կողմ հանդես եկող Բարձր պայմանավորվող կողմը հրաժարվում է կատարել այդ գործով կայացված վերջնական վճիռը, ապա կարող է, տվյալ Կողմին պաշտոնապես ծանուցելուց հետո, Կոմիտեի իրավասու ներկայացուցիչների ձայների երկու երրորդի մեծամասնությամբ ընդունված որոշմամբ, սույն հոդվածի 1-ին կետով տվյալ Կողմի ստանձնած պարտավորության կատարումը ձախողելու մասին հարցը հանձնել Դատարանին»:

Ի դեպ, տվյալ դրույթի հիմքով՝ 2017 թվականին Նախարարների կոմիտեն առաջին անգամ դիմել է ՄԻԵԴ և հայցել նրա դիրքորոշումն այն մասին, թե արդյոք Ադրբեջանն ապահովել է Իլգար Մամեդովն ընդդեմ Ադրբեջանի (Ilgar Mammadov v. Azerbaijan) վճիռը կատարելու իր ստանձնած պարտականությունը: Հարցի հետ կապված 2019 թվականին ՄԻԵԴ Մեծ պալատը կայացրել է վճիռ (վճիռը հասանելի է https://bit.ly/3yrYb6H հղումով:

Կարդացեք տվյալ վճիռը և պատասխանեք, թե ինչ խախտում է արձանագրել Ադրբեջանի դեմ և ինչ հիմնավորմամբ:

4.2 ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԵԽ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՆԻՍՏԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Կոնվենցիայի վերահսկողական մեխանիզմների երկարաժամկետ արդյունավետությունը բխում է ԵԽ անդամ բոլոր 47 պետությունների շահերից: Դրան միտված քայլերն արվում են մշտապես՝ պաշտպանելու և խթանելու մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները ԵԽ ողջ տարածքում:

Այդ քայլերն արվում են երեք հիմնական ուղղություններով՝

- Կոնվենցիայի արդյունավետ կատարում ներպետական մակարդակում,
- ՄԻԵԴ-ում ընթացակարգի արդյունավետության բարձրացում,
- ՄԻԵԴ վճիռների կատարման ու դրա նկատմամբ Նախարարների կոմիտեի վերահսկողական մեխանիզմների զարգացում: Առաջին երկու ուղղությունների մասին նախորդ դասերի և սույն դասի նախորդ ենթաթեմայի շրջանակներում Ձեզ արդեն ներկայացվել է:Դրանց մասով մնում է միայն ավելացնել, որ Կոնվենցիայի կատարման արդյունավետությունը ներպետական մակարդակում բարձրացնելու տեսանկյունից, ընդհանուր միջոցների համատեքստում, զգալի ազդեցություն ունի **պիլոտային վճիռների գործընթացը** (“pilot” judgment procedure): Դրանով ՄԻԵԴ ն իր մեծ լուման է ներդրել թե՛ վճիռների կատարման ու դրա վերահսկողության, և թե՛ ներպետական մեխանիզմների, հատկապես՝ ազգային մակարդակում

Նախորդ դասին Ձեզ հարց էր տրվել՝ ո՞րն է պիլոտային վճիռը: Այս հասկացությունը նկարագրված է սույն դասի «ԲԱՌԱՐԱՆ» մասում. համեմատեք Ձեր պատասխանը դրա հետ:

մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցների կատարելագործման տեսանկյունից:

Ինչ վերաբերում է ՄԻԵԴ վճիռների կատարման/վերահսկողության հարցին, ապա նորից ընդգծենք, որ վերահսկողություն իրականացնող ղեկավար հաստատությունը **Նախարարների կոմիտեն** է: Եվ այն իր վերահսկողական աշխատանքներն ապահովում է, այսպես կոչված *«Մարդու իրավունքների նիստերի»* (CM-DH meetings) միջոցով (անվանվում են նաև «Մարդու իրավունքների հանդիպումներ» կամ «CM-DH հանդիպումներ»):

Ի՞նչ եք կարծում՝ մարդու իրավունքների պաշտպանության ո՞ր միջոցներն են, որ կարելի է համարել «արդյունավետ»: Փորձեք ձևակերպել Ձեր պատասխանը:

Հատկանշական է, որ տեսականորեն Նախարարների կոմիտեի կազմում ընդգրկված «նախարարները» ԵԽ անդամ պետությունների արտաքին գերատեսչությունների ղեկավարներն են (արտաքին գործերի նախարարները), բայց գործնականում նրանց կազմով նիստ հավաքվում է տարին մեկ անգամ: Աշխատանքների առյուծի բաժինը, փաստացի, կատարում են «Նախարարների տեղակալները» (Deputies), որոնք, որպես ընդհանուր կանոն, հենց Եվրոպայի խորհրդում անդամ պետության մշտական ներկայացուցիչներն են (նստավայրը՝ Ստրասբուրգ):

Նախարարների կոմիտեի կանոնների համաձայն (որոնցով, ինչպես նախորդ դասերից մեկում նշել ենք, կարգավորվում են նաև կատարման գործընթացի վերահսկողության ընթացակարգն ու պայմանները)՝ կատարման ենթակա բոլոր գործերը, մինչև դրանց ավարտը և քանի դեռ Նախարարների կոմիտեն այլ բան չի որոշել, պետք է դրվեն Նախարարների տեղակալների Մարդու իրավունքների նիստերի օրակարգում: Նախարարների տեղակալները Մարդու իրավունքների նիստերի ձևաչափով հանդիպում են առնվազն տարին չորս անգամ, որտեղ քննարկում են ՄԻԵԴ վճիռների կատարման վիճակը: Այն արդյունավետ գործիք է. այդ նիստերում բարձրաձայնվում են կոնկրետ վճռի կամ վճիռների խմբի կատարման գործընթացում արձանագրված ձեռքբերումները, առկա խոչընդոտները կամ դժվարությունները, իսկ պետությունները ներկայացնում են իրենց դիրքորոշումներն ու հիմնավորումները, ձեռնարկված/ձեռնարկվող միջոցները, ինչպես նաև հնարավոր ձգձգումների պատճառները, եթե այդպիսիք կան:

Վերլուծաբանները հաճախ են քննարկում այն հարցը, թե արդյոք «Նախարարների տեղակալները», լինելով արհեստավարժ դիվանագետներ, կարող են արդյունավետ որոշումներ կայացնել հարցերի շուրջ, որոնք առնչվում են դատական ատյանի վճռի այս կամ այն պահանջի կատարմանը, ինչը փաստացի ենթադրում է նաև վճռի բովանդակության ճիշտ ընկալում (իսկ դա իրավունքի ոլորտի մասնագետի գործ է):

Ո՞րն է Ձեր տեսակետը:

Որպես հավելում, նշենք, որ այս գործում, և ընդհանրապես վճիռների մշտադիտարկման գործընթացում, դժվար է գերագնահատել **ՄԻԵԴ վճիռների կատարման դեպարտամենտի** *(Department for the Execution of Judgments of the European Court of Human Rights)* դերը: Այն գործում է ԵԽ «Մարդու իրավունքներ և

իրավունքի գերակայություն» գլխավոր տնօրինության կազմում և գործնականում հենց այդ ստորաբաժանումն է, որ, իր անկախ փորձագիտական աջակցությամբ ու խորհրդատվությամբ, ապահովում է քարտուղարության աշխատանքները՝ նպաստելով Նախարարների կոմիտեի վերահսկողական գործառույթի արդյունավետ իրականացմանը: Այն նաև աջակցում է անդամ պետություններին՝ վճիռների արագ, որակյալ և ամբողջական կատարման նրանց ջանքերում:

4.3 ԵԽ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՌԵԶՈԼՅՈՒՑԻԱՆԵՐԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Եվրոպայի խորհրդի կանոնադրությունը և Կոնվենցիան նախատեսում են իշխանությունների բաժանման սկզբունք: Նախարարների կոմիտեն ԵԽ-ի գործադիր մարմինն է, և նրա գործառույթները տարբերվում են ՄԻԵԴ-ի դատական գործառույթներից:

Եթե ընդհանուր գծերով ներկայացնենք, ապա Նախարարների կոմիտեի խնդիրն է, ըստ Կանոնադրության, քննել (consider) այն միջոցառումները, որոնք ուղղված են «Եվրոպայի խորհրդի նպատակի իրագործմանը», ներառյալ՝ կոնվենցիաների ու համաձայնագրերի կնքումը և առանձնահատուկ հարցերի վերաբերյալ պետությունների կողմից «ընդհանուր քաղաքականության ընդունումը» (Հոդված 15): Այս տեսանկյունից՝ Նախարարների կոմիտեի ընդունած ակտերն ունեն քաղաքական բովանդակություն և, հետևաբար, զգալի ազդեցություն:

ՄԻԵԴ վճիռների կատարման նկատմամբ վերահսկողության համատեքստում կառանձնացնենք վերահսկողական երկու փաստաթուղթ՝ **ռեզոլյուցիաներ** (resolutions) և **որոշումներ** (decisions):

Գոյություն ունի ռեզոլյուցիայի (բանաձևի) երկու տեսակ՝ **միջանկյալ** (interim) և **վերջնական** (final): Եթե միջանկյալ ռեզոլյուցիայի դեպքում Նախարարների կոմիտեն արձանագրում է կոնկրետ վճռի կատարման վիճակը և, ըստ անհրաժեշտության, հայտնում է իր մտահոգությունների մասին կամ անում է առաջարկներ, ապա վերջնական կամ եզրափակիչ ռեզոլյուցիայի միջոցով Նախարարների կոմիտեն արձանագրում է, որ վճիռը կատարված է, իսկ վերահսկողությունը ենթակա է փակման (closure):

Ինչ վերաբերում է որոշումներին, ապա դրանք Նախարարների տեղակալների ընդունած այն փաստաթղթերն են, որտեղ ամփոփվում է կոնկրետ վճիռների կատարման վիճակը՝ արձանագրելով այն ձեռքբերումները, մտահոգությունները և/կամ առաջարկները, որոնք առնչվում են տվյալ վճիռներին:

ՕՐԻՆԱԿ.

Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի խմբի (Virabyan v. Armenia group) կատարման շրջանակում ընդունվել են մի քանի որոշումներ: 2022 թվականի մարտին ընդունված վերջին որոշմամբ՝ Նախարարների տեղակալները՝ (1) ևս մեկ անգամ արձանագրել են, որ այդ խումբ վճիռները վերաբերում են ոստիկանությունում անձանց խոշտանգման կամ մահվան դեպքերին, դրանց առնչությամբ կատարված անարդյունավետ քննությունների հետ կապված խնդիրներին, (2) դիրքորոշումներ են հայտնել ձեռնարկված անհատական միջոցների մասին, ներկայացրել են կոնկրետ առաջարկներ, (3) ընդհանուր միջոցների մասով տվել են կոնկրետ գնահատականներ, իշխանություններից պահանջել են որոշակի տեղեկություններ և այլն:

ԲԱՌԱՐԱՆ

Այս հատվածում ներկայացված են դասի նյութին առնչվող առանցքային եզրույթները և դրանց բացատրությունները: Դրանք Ձեզ կօգնեն դասի նյութն ավելի հեշտ ընկալել: Եզրույթների բովանդակությունն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 50 րոպե:

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին (կոնցեպտներին), իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձեք դրանց:

ԲԱՌԱՐԱՆ

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով (ԵԽԽՎ)	Եվրոպայի խորհրդի (խորհրդակցական) մարմին, որը քննարկում է ԵԽ կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված հարցերը և Նախարարների կոմիտեին իր եզրակացությունները ներկայացնում է հանձնարարական-առաջարկությունների ձևով:
Համոզմունքներից ելնելով հրաժարվող	Քաղաքացի, ում կրոնական համոզմունքներին կամ դավանանքին հակասում է ընդհանրապես զինվորական ծառայություն անցնելը, և որից ելնելով նա հրաժարվում է պարտադիր ժամկետա¬ին զինվորական ծառայությունից:
Պիլոտային վճիռ	ՄԻԵԴ-ի կայացրած դատական ակտ, որը հստակեցնում է համակարգային խնդրի բնույթը, մատնանշում է պատասխանող պետության կողմից ապահովման ենթակա միջոցը և նպատակ ունի անդրադառնալ կրկնվող դեպքերին ու լուծել ներպետական օրենսդրությունից կամ պրակտիկայից բխող համակարգային պրոբլեմները:
Միջանկյալ ռեզոլյուցիա	ՄԻԵԴ վճիռների կատարման նկատմամբ վերահսկողության շրջանակում Նախարարների կոմիտեի ընդունած փաստաթուղթ, որով արձանագրվում է կոնկրետ վճռի կամ բարեկամական կարգավորման վերաբերյալ որոշման կատարման վիճակը և, ըստ անհրաժեշտության, ներկայացվում են մտահոգություններ կամ արվում են առաջարկներ՝ արդյունավետ կատարելու վճիռը/որոշումը:

Վերջնական ռեզոլյուցիա

ՄԻԵԴ վճիռների կատարման նկատ-մամբ վերահսկողության շրջանակում Նախա-րարների կոմիտեի ընդունած փաստա-թուղթ, որով արձանագրվում է, որ վճռի կատարման համար անհրաժեշտ բոլոր միջոցներն ապահովված են, վճիռը կատարված է, և կատարման նկատմամբ վերահսկողությունը փակվում է:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ

Կարդացեք լրացուցիչ նյութերը՝ որքանով հնարավորություն է տալիս օտար լեզվի Ձեր իմացությունը: Սա չի նշանակում, որ առանց տվյալ նյութերի ընթերցման հնարավոր չէ լիարժեք յուրացնել դասի բովանդակությունը, բայց նշված լրացուցիչ աղբյուրները կօգնեն առավելապես պատրաստված լինել մյուս դասերին, ինչպես նաև վեր հանել նոր հարցեր և մտածել դրանց շուրջ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ

Resolution Res(2004)3 of the Committee of Ministers on judgments revealing an underlying systemic problem (Adopted by the Committee of Ministers on 12 May 2004, at its 114th Session), — Նախարարների կոմիտեի այս ռեկոմենդացիան վերաբերում է Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտման հիմքում ընկած համակարգային խնդիրներին առնչվող հարցերին:	https://bit.ly/3wi0iaF
The Execution of Judgments of the European Court of Human Rights: Human Rights files No. 19, — Այս ձեռնարկում ներկայացվում են ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացին, ներառյալ՝ ՄԻԵԴ-ին և Նախարարների կոմիտեին վերապահված գործառույթներին վերաբերող հարցեր:	https://bit.ly/3vZGDxh
Исполнение постановлений Европейского Суда // В кн.: Д. Харрис, М. О'Бойл и К. Уорбрик, Право Европейской конвенции по правам человека, сс. 238 263 — Այս աղբյուրի երկու առանձին գլուխներ, ի թիվս այլնի, վերաբերում են ՄԻԵԴ վճիռների կատարման գործում Նախարարների կոմիտեի («Глава 1. Роль Комитета министров») և ՄԻԵԴ-ի («Глава 2. Европейский суд и исполнение его постановлений») դերին, լիազորություններին և կիրառվող գործիքակազմին:	-